

Երուսաղէմի մէջ կ'ընդօրինակէ Ճաշոց մը, ի խնդրոյ մահտեսի Ամիրփաւայի «որ եկն յԵրուսաղէմ և ետ գրել զսա յսնուն Երուսաղէմի»: Սոյն ձեռագիրը այժմ կը գտնուի Ս. Ղազարու վանքը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԶ. ԱՏԱՆԱՅԻ. — 1795ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը եւ իր ծախքովը կուտինայի Ձիկիներով զարդարել կուտայ Ս. Յակոբի տաճարին այլևայլ կողմերը, ըստ հետեւեալ յիշատակարանին. «ի պատրիարքութեան տուն Պետրոսի նորապսակ սրբոյն. վեհին մերոյ, յիշատակ է բոլոր տեղուոյս չինիքն Ատանացի մհի տէր Օհանին եւ իւր ծնողացն եւ կողակցւոյն, ՌՄԽԴ (=1795) թուին:

Ն

ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ՄՈՎԱՅԻ. — Հիմնադիր Լիմ անապատի 1622 ին. այդ թուականէն առաջ, Ներսէս վրդ. Երուսաղէմ կ'այցելէ և կը գրէ Ողբ Երուսաղիի և Պատմ. փոխառն Տիրաւոր ոտանաւորները գեղջուկ բարբառով, յետոյ կրկին կը շարագրէ ի խնդրոյ այլոց. այդ ձեռագիրը այժմ կը գտնուի Ս. Ղազարու վանքը:

Ս

ՍԱՐԳԻՍ ԳՐԻՉ (սգւ.). — ՊԶԹ (=1440)ին թուին Երուսաղէմի մէջ կ'ընդօրինակէ Աղօրսանոց մը, ի վայելումն հոգեւոր մօր իւրոյ կուսակրօն Եղիսարէթ Պլուզի, կոկող թղթոյն՝ Աքրահաւ, կազմող Պետրոս: Սոյն ձեռագիրը այժմ կը գտնուի Ս. Ղազարու վանքը:

ՍԻՄԵՈՆ ԵՐԷՅ, ՁԻԼԵՅԻ. — 1684 ին կ'այցելէ Երուսաղէմ, սա յիշատակարանին համաձայն. «ի թվ. ՌՃԼԳ (= 1684) նորոգեցաւ Մաշտոցս ձեռամբ Պետրոս արեղայի ի Ս. Երուսաղէմ, ստացող Ձիլեցի Սիմէոն երէց որ յԵրուսաղէմ գայ յայժմ ամի...»: Այս ձեռագիրը այժմ կը գտնուի Ռուսճուք:

